ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 140-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***՝

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի երրորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների 2021 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացությունները ի գիտություն ընդունելու մասին.

2) Որպես նվեր գույքն ընդունելուն համաձայնություն տալու մասին.

3) Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին.

4) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

5) Անշարժ գույք գնելուն համաձայնություն տալու մասին.

6) Աբովյանի N 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

7) «Աբովյանի N 3 միջհամայնքային մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

8) «Աբովյանի N 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

9) «Աբովյանի N 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

10) «Աբովյանի N 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

11) «Աբովյանի N 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

12) «Աբովյանի N 9 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

13) «Աբովյանի N 10 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.

14) «Աբովյանի N 12 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն

անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.
15) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկու «Զեփյուռ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.
16) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կամարիսի «Կակաչ» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.
17) ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի «Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին.
18) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Առինջ գյուղի Խ.Աբովյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 11/1 հասցեում գտնվող հողամասն Արմեն Ավետիսյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
19) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0306-0047 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
20) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0306-0049 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
21) Աբովյան քաղաքի 2-րդ Արդյունաբերական թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող 1.21 հեկտար մակերեսով հողամասից 0.44725 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
22) Աբովյան համայնքի Գետարգել գյուղում գտնվող 07-058-0002-0185 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.
23) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
24) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին.
25) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամասի թիվ 4 հասցեում գտնվող հողամասում «Բնակելի թաղամասի կառուցման» ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին.
26) Կոտայքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին.
27) Աբովյան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին.
28) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ԶԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 141-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի և Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 18-Ա որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Ի գիտություն ընդունել Աբովյան համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների 2021 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության կողմից տրված 11 (տասնմեկ) բնակավայրերի եզրակացությունները (կցվում են):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՁԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՁԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

Բյուջեի կատարման հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

2021թ. դեկտեմբերի 31

[illegible]
[illegible]
[illegible]

Բովանդակություն

[illegible] [illegible] նկարագրություն 1

Հաշվետվություններին կից ծանոթագրություններ 6

Բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվություն 11

Բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ գործառնական դասակարգմամբ 20

Բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ տնտեսագիտական դասակարգմամբ 25

Բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվություն 30

Բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվություն 35

Ֆինանսական հաշվետվություն 44

Crowe

Անկախ աուդիտորական եզրակացություն

Աբովյան համայնքի համայնքապետին և ավագանու անդամներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ «Համայնք») 2021թ. բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը գործառնական դասակարգմամբ, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը տնտեսագիտական դասակարգմամբ, Համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը և Համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը:

Մեր կարծիքով կից հաշվետվությունները ճշմարիտ են ներկայացնում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Աբովյան համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ գործառնական դասակարգմամբ, բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը տնտեսագիտական դասակարգմամբ, բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ին ընդունված թիվ 254-Ն հրամանի պահանջների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունները ներկայացված են «Աուդիտորի պատասխանատվությունները բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ» հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հրատարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագծի» (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Պատվիրատուի նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պատասխանատվությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագծի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Centre,
7, Argishti str., 1st floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 00
Email: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես կենտրոն,
Արգիշտի փող., 7, 1-ին հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 00
Էլ.հասցե: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Crowe

Հանգամանքների լուսաբանում

Համայնքի բյուջեի կատարողականի հաշվետվությունները նախորդ տարվա աուդիտի չեն ենթարկվել, ուստի մենք որևէ կարծիք չենք հայտնում նախորդ տարվա տվյալների վերաբերյալ:

Ղեկավարության պատասխանատվությունը Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների պատրաստման համար

Համայնքի ղեկավարությունը պատասխանատու են այդ հաշվետվությունների «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ին ընդունված թիվ 254-Ն հրամանի պահանջների համապատասխան Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով Համայնքի ղեկավարությունը սահմանում են անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Համայնքի բյուջեի կատարման հաշվետվություններ, որոնք զերծ են սխալի արդյունքում նյութական խեղաթյուրումից:

Բյուջեի կատարման հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Համայնքի գործունեության անընդհատությունը, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք բացի գործունեության դադարեցումն է:

Համայնքի ղեկավարությունը պատասխանատու է Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, թե արդյոք Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով զերծ են սխալներից պայմանավորված բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՄ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հայտնաբերել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը բյուջեի կատարման հաշվետվություններում (եթե այդպիսիք առկա են եղել) պայմանավորված բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար:
- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգերը տվյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել բաժնետիրական ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

Crowe

- Գնահատել ենք բաղաքապետարանի ղեկավարության կիրառված հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ոլորտին գնահատումները և կից բացահայտումները:
- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացության տալու ամսաթիվը:
- Գնահատել ենք Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք այդ հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքները ու իրադարձությունները այնպես, որպեսզի համապատասխան ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա բերություններ մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀԱՀ): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում (եթե այդպիսիք առկա են), եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգկերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտում:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավար Այբերտ Ասատրյանն է, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է:

Այբերտ Ասատրյան

Տնօրեն-գործնական, առաջադրանքի պատասխանատու

16 օգոստոսի 2022թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հազար դրամ	2021թ տարեկան Պլան (ճշտված)	2021թ Փաստացի	2020թ Փաստացի	Կատարման % 2020թ. նկատմամբ
Եկամտատեսակներ				
Հարկեր և տուրքեր	420,840,000	549,992,500	421,157,900	130.6%
Պաշտոնական դրամաշնորհներ	1,025,693,300	1,021,339,500	1,041,437,100	98.1%
Այլ եկամուտներ	447,161,000	425,089,300	73,339,400	130.6%
Ընդամենը եկամուտներ	**1,893,694,300**	**1,996,421,300**	**1,788,089,500**	**111.7%**
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	(445,530,100)	(355,833,400)	(254,776,400)	139.6%
Պաշտպանություն	(1,100,000)	-	-	-
Տնտեսական հարաբերություններ	(35,068,000)	(130,738,900)	(69,127,500)	189.1%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	(588,000,000)	(555,337,800)	(522,537,200)	106.3%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	(235,719,700)	(165,875,400)	(110,103,100)	150.7%
Առողջապահություն	(2,500,000)	(2,370,400)	(1,430,000)	165.8%
Հանգիստ, մշակույթ և կրոն	(137,348,400)	(54,734,800)	(105,669,700)	51.8.0%
Կրթություն	(961,015,500)	(899,366,600)	(677,047,900)	132.8%
Սոցիալական պաշտպանություն	(500,000)	(380,000)	(745,000)	51%
Հիմնական բաժիններին չպատվող պահուստային ֆոնդեր	(2,084,300)	-	(50,000,000)	-
Ընդամենը բյուջետային ծախսեր	**(2,338,830,000)**	**(1,903,159,500)**	**(1,791,436,800)**	**106%**
	(445,135,700)	(702,880,900)	(3,347,300)	-278.6

Հաշվետվությունները հաստատվել են Համայնքի ղեկավարության կողմից
2022 թ. Մարտի 10 –ին (էջ 5)

Բյուջեի կատարման հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն

Աբովյան համայնքը Աբովյանի բնակչության հանրությունն է:

Աբովյանը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում:
Աբովյան համայնքը (Համայնք) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: Համայնքն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք:
Աբովյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ Աբովյանի ավագանին և Աբովյան համայնքի ղեկավարը, որոնք գործում են իրենց նստավայրում՝ ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1, Կոտայքի մարզ, ՀՀ հասցեում:

Աբովյանի խորհրդանիշներն են՝

- Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը,
- Հայաստանի Հանրապետության պետական դրոշը,
- Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Ընդհանուր սկզբունքներ

Աբովյանի բյուջետային համակարգը հիմնված է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝

- Բյուջետային համակարգի միասնություն
- Բյուջեի ինքնուրույնություն
- Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն
- Բյուջեի հաշվեկշռվածություն
- Բյուջետային ելքերի ամբողջական ծածկվածություն
- Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն
- Բյուջեի հրապարակայնություն
- Բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն
- Բյուջեի իրատեսություն

Բյուջետային համակարգի միասնականության սկզբունքը նշանակում է իրավական հիմքի, դրամական համակարգի, բյուջետային փաստաթղթերի ձևերի, բյուջետային դասակարգման, բյուջետային գործընթացի սկզբունքների միասնություն:

Բյուջեի ինքնուրույնության սկզբունքը նշանակում է, որ Աբովյանը որպես ինքնակառավարման մարմին իրավունք ունի բյուջետային օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն իրականացնել բյուջետային գործընթացը:

Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը նշանակում է, որ օրենսդրությամբ սահմանված բյուջեի մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման բյուջեում: Համայնքի բյուջեի բոլոր ելքերը ենթակա են ֆինանսավորման բյուջետային համակարգում կուտակված բյուջետային միջոցների հաշվին:

Բյուջեի հաշվեկշռվածության սկզբունքը նշանակում է, որ բյուջեով նախատեսված ելքերի ծավալը չպետք է գերազանցի մուտքերի ծավալը:

Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ բյուջեի կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի, բյուջետային միջոցների նվազագույն օգտագործման կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լուիզագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

Բյուջեի հրապարակայնության սկզբունքը նշանակում է հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարտադիր հրապարակումը, բյուջեի նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարտադիր թափանցիկությունը:

Բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը նշանակում է, որ բյուջետային միջոցները օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ առաջադրանքների՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ:

Բյուջեի իրատեսության սկզբունքը նշանակում է Աբովյանի զարգացման կանխատեսման և դրա հիման վրա բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման իրատեսությունը:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է բյուջեի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է բյուջեի կատարման հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև տասակա հազար միավորը:

2.3 Համապատասխանություն

Բյուջեի կատարման մասին հաշվետվությունը կազմված է երկու հիմնական հաշվետվություններից՝ բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ և բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություններից:

Բյուջեի եկամուտների կատարման և բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են Աբովյան համայնքի 2021թ. բյուջեի տարեկան հաստատված պլանը, ճշտված պլանը և փաստացի կատարումը:

Աբովյան համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը ներկայացնում է ավագանու քննարկմանը: Բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում: Վերջնական քննարկումներից հետո հաստատվում է բյուջեի տարեկան պլանը:

Բյուջետային տարվա ընթացքում համայնքապետարանը կարող է տվյալ տարվա Աբովյանի բյուջեի մասին ավագանու որոշմամբ հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 15 տոկոսի սահմաններում վերաբաշխել հաստատված

հատկացումների գումարներն այդ որոշմամբ սահմանված ծախսային ծրագրերի միջև, եթե տվյալ տարվա Արովյանի բյուջեի մասին ավագանու որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Բյուջետային տարվա ընթացքում Համայնքի ղեկավարը կարող է կատարել յուրաքանչյուր ծրագրի գծով Արովյանի բյուջեի մասին ավագանու որոշմամբ սահմանված հատկացումների ընդհանուր գումարի 15 տոկոս չափաքանակը չգերազանցող ելքերին վերաբաշխումներ տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև, եթե տվյալ տարվա Արովյան բյուջեի մասին ավագանու որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Բյուջեի կատարումը Արովյան համայնքի բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն է:

Արովյանի բյուջեն եկամուտների ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նախատեսված է Արովյանի զարգացման ծրագրի, ինչպես նաև ավագանու և Համայնքի ղեկավարի օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար: Արովյանի բյուջեն ընդունվում է մեկ տարով: Բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Բյուջեն կատարվում է օրենքով սահմանված կարգով:

Արովյան համայնքի միջոցների մուտքերը և ելքերը արտացոլվում են հատուկ բացված գանձապետական հաշիվներում: Գանձապետական հաշիվներից գումարների վճարումը կատարվում են բյուջետային միջոցների առկայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արովյանի բյուջեի վարչական և ֆոնդային մասերին ամրագրվող բյուջետային մուտքերի աղբյուրները սահմանվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսգրքով, իսկ այդ աղբյուրների հաշվին Արովյանի բյուջեի համապատասխան մասերից ելքերի իրականացման ուղղությունները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսգրքով:

Բյուջետային տարվա համար Արովյանի բյուջեի յուրաքանչյուր (վարչական և ֆոնդային) մասում նախատեսված հաշվարկային-պատասխանատու ելքեր չեն կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի համապատասխան մասերով նախատեսված հաշվարկային պրոգրամային մուտքերը:

Բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեի հավելուրդ, իսկ բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը՝ բյուջեի պակասուրդ:

3. Համայնքի բյուջեի եկամուտների աղբյուրները

Արովյանի բյուջեի եկամուտները օրենսդրությամբ համապատասխան անվճարության կարգով ստացվող դրամական միջոցներն են: Արովյանի բյուջեի եկամտի աղբյուրներն են՝

- Հարկեր և տուրքեր
- Պաշտոնական դրամաշնորհներ
- Այլ եկամուտներ:

3.1 Հարկեր և տուրքեր

Աբովյանի բյուջեն ձևավորվում է հարկերի և տուրքերի մասով Աբովյանի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- հողի հարկ՝ Աբովյանի վարչական տարածքում գտնվող հողի համար
- գույքահարկ՝ Աբովյանի վարչական տարածքում գտնվող գույքի համար
- պետական տուրք քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու և նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու համար
- տեղական հարկեր, տուրքեր և վճարներ, այլ եկամուտներ:

3.2 Պաշտոնական դրամաշնորհներ

Աբովյանի բյուջեն ձևավորվում է պաշտոնական դրամաշնորհների մասով Աբովյանի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- պետական բյուջեից ֆինանսական հավասարեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ
- պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ և ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ
- այլ աղբյուրներից առաջվող դրամաշնորհներ:

3.3 Այլ եկամուտներ

Աբովյանի բյուջեն ձևավորվում է այլ եկամուտների մասով Աբովյանի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- տուգանքներ
- չահաբաժիններ
- գույքի վարձակալություն
- ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից
- վարչական գանձումներ
- մուտքեր առևծներից, տուգանքներից
- ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ
- կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ
- այլ եկամուտներ:

Շահաբաժինները, եթե այդպիսիք առաջանում են, ներառում են բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մուտքերը:

Գույքի վարձակալությունից եկամուտները ընդառում են մուտքերը հետևյալ աղբյուրներից. համայնքի սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև այլ գույքի վարձակալություններից:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ներկայացնում են պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից տրամադրվող միջոցները, օրենքով սահմանված դեպքում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների համար կատարվող գործարքների վրկաց առաջվող այլ վճարները:

Վարչական գանձումները գոյանում են տեղական վճարներից և համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար կատարված վճարներից:

Մուտքերը սեփականաշնորհումից ստացվում են վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից:

4. Համայնքային բյուջեի ծախսերի ուղղությունները

Բյուջեի ծախսերի կատարման մասին հաշվետվություններում ծախսերը ըստ գործառական դասակարգման ներկայացվում են հետևյալ կերպ՝

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
- Պաշտպանություն
- Տնտեսական հարաբերություններ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ
- Առողջապահություն
- Հանգիստ, մշակույթ և կրոն
- Կրթություն
- Սոցիալական պաշտպանություն
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր:

Աբովյանի բյուջեի վարչական մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների հետ կապված ընթացիկ, պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման և ֆոնդային մասի միջոցների մասնաճյուղերի գծով ծախսերը Աբովյանի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների հետ կապված կապիտալ ծախսերը:

Բյուջեի միջոցների հաշվին կապիտալ ծախսերը իրականացվում են հիմք ընդունելով համայնքի կապիտալ ներդրումների ծրագիրը, ինքնակառավարման մարմինների որոշումները, ծախսերի կատարման փուլերն ու ժամկետները:

Բյուջեի միջոցների հաշվին ապրանքներ գնելու, աշխատանքներ կատարելու և ծառայություններ մատուցելու ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական գնումների մասին օրենքով սահմանված կարգով:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Կուտակված հավելուրդ (պակասուրդ)	Ընդամենը	Ընդամենը զուտ ակտիվ (սեփական կապիտալ)
Վերահաշվարկված մնացորդ	1,173,464.9	1,173,464.9	1,173,464.9
Փոփոխություններ զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) 2021թ-ին			
Նախորդ ժամանակաշրջանի հավելուրդ (պակասուրդ)	505,871.2	505,871.2	505,871.2
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	1,679,336.1	1,679,336.1	1,679,336.1
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	1,679,336.1	1,679,336.1	1,679,336.1
Վերահաշվարկված մնացորդ	1,679,336.1	1,679,336.1	1,679,336.1
Փոփոխություններ զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) 2021թ-ին			
Հաշվետու ժամանակաշրջանի հավելուրդ (պակասուրդ)	311,042.4	311,042.4	311,042.4
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	1,990,378.4	1,990,378.4	1,990,378.4

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	2021թ. (հաշվետու)	2020թ. (նախորդ)
Ներհոսքեր գործառնական գործունեությունից		
Բյուջեի ֆինանսավորման ծառայությունների մատուցումից	1,023,086.5	829,021.4
Գործառնական գործունեությունից այլ ներհոսքեր	1,137,818.2	960,450.1
Ընդամենը գործառնական գործունեությունից ներհոսքեր	2,160,904.7	1,789,471.5
Արտահոսքեր գործառնական գործունեությունից		
Աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումներ	(273,072.2)	(183,983.2)
Ծառայությունների ձեռքբերումների դիմաց վճարումներ	(52,106.9)	(70,739.9)
Նյութերի, ապրանքների և այլ պաշարների ձեռքբերումների դիմաց վճարումներ	(11,405.9)	(14,558.1)
Հարկերի և այլ պարտադիր վճարների հետ կապված վճարումներ	(11,895.8)	(3,925.2)
Գործառնական գործունեությունից այլ արտահոսքեր	(1,530,948.3)	(1,205,205.6)
Ընդամենը գործառնական գործունեությունից արտահոսքեր	(1,879,429.1)	(1,478,412.0)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	281,475.6	311,059.5
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների վաճառքից ներհոսքեր	734,887.1	311,118.6
Հիմնական միջոցների ձեռքբերման հետ կապված արտահոսքեր	(758,617.5)	(579,368.4)
Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ	(23,730.3)	(268,249.8)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	257,745.3	42,809.7
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի 2022թ	446,757.6	403,947.9
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի 2021թ.	704,502.8	446,757.6

Crowe

Նամակ ղեկավարությանը

Աբովյան Համայնքի

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Ընթացիկ ժամանակաշրջանի դիտարկումներ 5

Crowe

Արդվյան համայնքապետին և ավագանու անդամներին

Համաձայն "Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ"-ի և Արդվյան համայնքի միջև 2022թ. Մայիսի 04-ին կնքված ""ԱԲՀ-ԳՀԾՁԲ"-22/13 պայմանագրի` մենք աուդիտի ենք ենթարկել Արդվյան համայնքի (այսուհետ` "Համայնք") 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման հաշվետվությունները: Աուդիտի ընթացքում բացահայտել ենք խնդիրներ, որոնք կարող են արժանանալ Արդվյանի համայնքապետի և ավագանու անդամների ուշադրությանը: Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ համոզվելու համար, որ բյուջեի կատարման հաշվետվությունները չեն պարունակում էական սխալներ և, հետևաբար, այն չէր նախատեսվել թերություններ բացահայտելու ու Արդվյանի համայնքապետին և ավագանու անդամներին տեղեկացնելու համար: Հետևաբար, աուդիտը չի ներառում նմանատիպ բոլոր թերությունների բացահայտումը: Մենք սույն նամակում ներառել ենք այնպիսի թերություններ, որոնք էականորեն կազդեն Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների վրա:

Կից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները նպատակ ունեն օժանդակելու Արդվյան համայնքի և նրա կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի բյուջեի կատարման հաշվետվությունների բարելավման գործում:

Սույն նամակում ներկայացված դիտարկումները չեն բացահայտում Համայնքի ներքին վերահսկողության համակարգում առկա բոլոր թերությունները: Աուդիտի հիմնական նպատակն է կարծիք արտահայտել Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների վերաբերյալ: Այս նպատակին հասնելու համար մենք ուսումնասիրել ենք Համայնքի ներքին վերահսկողության համակարգը` որոշելու, թե որքանով կարող ենք հիմնվել այդ համակարգի վրա` աուդիտորական ընթացակարգերը պլանավորելու նպատակով: Այնուամենայնիվ, այս ուսումնասիրությունները չէին կարող բացահայտել բոլոր այն թերությունները, որոնք կարող էին բացահայտվել Համայնքի ներքին վերահսկողության համակարգի հատուկ ստուգումների իրականացման ժամանակ:

Սույն նամակը պատրաստվել է միայն Արդվյան համայնքի ղեկավարության համար և նախատեսված չէ այլ նպատակների համար:

Crowe

Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում Ձեզ և Ձեր աշխատակազմին աուդիտի ընթացքում ցուցաբերած համագործակցության և օժանդակության համար:

Ընկերության արձագանքը

Սույն նամակում ներկայացված դիտարկումների վերաբերյալ համայնքապետարանի գրավոր արձագանքների նկատմամբ մենք չենք կիրառել աուդիտորական ընթացակարգեր և, հետևաբար, չենք արտահայտում կարծիք դրանց վերաբերյալ:

Հարգանքով

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-Գործընկեր,
Առաջադրանքի պատասխանատու

11 օգոստոս 2022թ

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Արովյան համայնքի Ընթացիկ ժամանակաշրջանի դիտարկումներ

1. Նախահաշիվ

1.1 *Դիտարկում*

- Աշխատակիցների աշխատանքի վարձատրության ոլորտում աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ուսումնասիրությունից պարզվեց, որ համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման պարզաբանման 4112 ծախսային հոդվածով, տարեկան ճշտված պլանի համաձայն կազմել է 200,000 ՀՀ դրամ, փաստացի կատարումը 192,500 ՀՀ դրամ, սակայն Արովյան համայնքի ղեկավարի կարգադրությունների համաձայն 2021թ ընթացքում տրվել է 83,277,500 ՀՀ դրամի պարգևատրում աշխատավարձի ֆոնդից 4111-ից, որը բյուջեով նախատեսված չի եղել:

- Համայնքապետարանի կողմից ձեռք է բերվել անվադող և մարտկոց ձևակերպվել է, որպես սպառման նյութեր հոդված 4264, ձևակերպումը պետք է լիներ հոդված 4252-ից մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում:

- Համայնքապետարանի կողմից նախագծահետազոտական ծախսերը ՀԾ համակարգում ձևակերպվել է 5314 բարձրարժեք ակտիվների հոդվածով, սակայն պետք է ձևակերպվեր 5134 հոդվածով նախագծահետազոտական ծախսերի գծով արտահոսքեր:

Հետևանք

Խախտվել է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5 հրամանը և նախահաշվով հաստատված համապատասխան ծախսը կատարվել է տնտեսագիտական դասակարգման ոչ համապատասխան հոդվածով:

Առաջարկ

Առաջնորդվել ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5 հրամանի պահանջներով:

Ղեկավարության արձագանք

2. Ֆինանսական Հաշվետվություններ

2.1 *Դիտարկում*

Արովյանի համայնքը պարտավոր է հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվությունները, հրապարակման համար նախատեսված կայքում, սակայն մեր կողմից պարզվել է, որ հաշվետվությունները չի հրապարակվել:

Հետևանք

Խախտվել է <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի գ ենթակետի պահանջը:

Առաջարկ

Առաջնորդվել <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի գ ենթակետի պահանջով:

Ղեկավարության արձագանք

2.2 *Դիտարկում*

2021 թ-ի Աբովյան համայնքի բյուջեի կատարողական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվությունների /հաշվեկշիռ/ միջև , առկա են տարբերություններ, որի արդյունքում Համայնքի կողմից կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները /հաշվեկշիռը/ չի արտացոլում փաստացի կատարված արդյունքները:

Հետևանք

Խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. նոյեմբերի 24-ի թիվ 725-Ն "ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ" հրամանի Բաժին 2-ի 2.4 կետի պահանջը:

Առաջարկ

Առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. նոյեմբերի 24-ի թիվ 725-Ն "ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ" հրամանի Բաժին 2-ի 2.4 կետի պահանջով:

Ղեկավարության արձագանք

3. Հաշվապահական ձևակերպումներ

3.1 *Դիտարկում*

- Հաշվապահական հաշվառման ծրագրում, հիմնական աշխատավարձի, հավելումների, հավելավճարների և պարգևատրումների ձևակերպումների ուսումնասիրությունից պարզվեց, որ ՀԾ համակարգում, աշխատավարձի 2021 թվականի ընդհանրացված հաշվետվությունում, պարգևատրումները կազմում են 84,410,536 ՀՀ դրամ, իսկ կարգադրություններով պարգևատրումը կազմում է 83,277,500 ՀՀ դրամ, տարբերությունը կազմում է 1,133,036 ՀՀ դրամ:

- ՀԾ համակարգի շրջանառության տեղեկագրում պարգևատրման հաշվից 4112-ից կազմել է 61,513,749 ՀՀ դրամ, իսկ կարգադրություններով պարգևատրումը կազմում է 83,277,500 ՀՀ դրամ տարբերությունը կազմում է 21,763,751 ՀՀ դրամ:

Հիմնավոր

Այսպիսով՝ առկա է ռիսկ, որ աշխատակիցներին հաշվարկված և վճարված պարգևատրումների, արձակուրդայինների, վերջնահաշվարկների միջին ամսական աշխատավարձը, կարող են լինել թերագնահատված կամ գերագնահատված:

Առաջարկ

Առաջարկում ենք՝ տալ ճշգրտումներ:

Ղեկավարության արձագանք

4. Հիմնական միջոցներ

4.1 *Դիտարկում*

Համայնքի ծառայողական մեքենաների և օգտագործողների համար չի սահմանվել լիակատար նյութական պատասխանատվություն:

Հիմնավոր

Խախտվել է Աշխատանքային օրենսգրքի 240 հոդվածի 1-ի կետը:

Առաջարկ

Կնքել լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիրը:

Ղեկավարության արձագանք

4.2 *Դիտարկում*

Համայնքապետարանի շենքում գտնվող տարածքը ֆիզիկական անձին, տրվել է օգտագործման, սակայն չի կնքվել վարձակալության կամ անհատույց օգտագործման պայմանագիր:

Հիմնավոր

Խախտվել է ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2004 թ. սեպտեմբերի 15-ի 205-Ն հրամանը:

Առաջարկ

Առաջնորդվել ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2004 թ. սեպտեմբերի 15-ի 205-Ն հրամանի պահանջներով:

Անկախատրության արժագանք

4.3 *Դիտարկում*

Հիմնական միջոցների ուսումնասիրության արդյունքում պարզվեց՝ գույքագրման ցուցակներում, առկա են զրոյական արժեքով հիմնական միջոցներ, որոնց համար չի իրականացվել վերագնահատում կամ դուրագրում՝

Հետևանք

Խախտվել է ՀՀ Կառավարության 2016 թ-ի 264 – Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետ ի
ՀՀ Ֆինանսների նախարարի 2007թ. հոկտեմբերի 31-ի թիվ 787-Ն հրամանի պահանջներին՝

Առաջարկ

Հետևել՝ ՀՀ Կառավարության 2016 թ-ի 264 – ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ Ֆինանսների նախարարի 2007թ. հոկտեմբերի 31-ի թիվ 787-Ն հրամանի պահանջներին՝

Անկախատրության արժագանք

5. Գնումներ

5.1 *Դիտարկում*

Գնումների պլանում չեն կատարվել հանպատրաստության փոփոխություններ և չեն հրապարակվել տեղեկագրում:

Հետևանք

Խախտվել է՝ ՀՀ կառավարության 13.04.2017թ.-ի <<Գնումների պլանի ձևվի, դրա լրացման, հաստատման եվ հրապարակման կարգը հաստատելու մասին>> 390-Ն որոշում:

Առաջարկ

Առաջնորդվել՝ <<ՀՀ Գնումների Մասին Օրենքի>> և ՀՀ կառավարության 13.04.2017թ.-ի <<Գնումների պլանի ձևվը, դրա լրացման, հաստատման եվ հրապարակման կարգը հաստատելու մասին>> 390-Ն որոշում և պահանջներով՝

Անկախատրության արժագանք

5.2 *Դիտարկում*

Արփիի համայնքի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր N <<ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/23-02>> կնքված է եղել մատակարարել 500 հատ երկաթե խողովակ (չափի համար 89 մմ.) պատի հաստությունը 3 մմ, սակայն փաստացի հանձնման ընդունման ակտով և վճարման հանձնարարագրով կատարվել է ընդամենը 300 հատ երկաթե խողովակի գնում:

Հետևանք

Պայմանագիր N <<ԱԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/23-02>> 3-րդ կետով սահմանված կողմերի իրավունքները և պարտականությունները. 2.1.3 –րդ ենթակետով, եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝
ա)պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,
բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Առաջարկ

Առաջնորդվել կնքված պայմանագրի պահանջներին համապատասխան:

Ղեկավարության արձագանք

6. Դրամարկղային գործառնություններ

6.1 *Դիտարկում*

Համայնքի կողմից իրականացված կանխիկ գործարքների ուսումնասիրությունից պարզվեց՝ դրամարկղային գրքում կատարվել է սխալի ուղղում, որը չի ստորագրել գլխ.հաշվապահը, ստորագրված է միայն գանձապահի կողմից , մուտքի օրդերների, ելքի օրդերների և դրամարկղային գրքի մեջ, չի լրացվել թղթակցող հաշիվները :

Հետևանք

Խախտվել է Հարկային օրենսգրքի 385 րդ հոդվածի 3 րդ կետի պահանջը:

Առաջարկ

Առաջնորդվել Հարկային օրենսգրքի 385 րդ հոդվածի 3 րդ կետի պահանջով:

Ղեկավարության արձագանք

Crowe

Crowe & Asatryans LLC

[illegible]

Գարտնի

ԱՐԻՆՋԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բյուջեի կատարման հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

2021թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Հաշվետվություններին կից ծանոթագրություններ 6

Ֆոնդի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվություն 11

Ֆոնդի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ գործառնական դասակարգմամբ 20

Ֆոնդի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ տնտեսագիտական դասակարգմամբ 25

Ֆոնդի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվություն 30

Ֆոնդի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվություն 35

Crowe

Անկախ աուդիտորական եզրակացություն

Աբովյան համայնքի համայնքապետին և ավագանու անդամներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Առինջի բնակավայրի (այսուհետ «Բնակավայր») 2021թ. բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Բնակավայրի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, Բնակավայրի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ գործառնական դասակարգմամբ, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, Բնակավայրի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը և Բնակավայրի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը:

Մեր կարծիքով կից հաշվետվությունները ճշմարիտ են ներկայացնում 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Աբովյան համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ գործառնական դասակարգմամբ, բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ին ընդունված թիվ 254-Ն հրամանի պահանջների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունները ներկայացված են «Աուդիտորի պատասխանատվությունները բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ» հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագծի» (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Քաղաքապետարանի նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պատասխանատվությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագծի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Crowe and Asatryans LLC
"Sun Monkey" Business Center,
7, Argishti str., 1st floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
«Սան Մանկի» Բիզնես կենտրոն
Արգիշտի փող., 7, 1-ին հարկ
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
Էլ. փոստ՝ general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.com
www.asatryans.com

Crowe

Հանգամանքների լուսաբանում

Բնակավայրի բյուջեի կատարողականի հաշվետվությունները նախորդ տարի աուդիտի չեն ենթարկվել, ուստի մենք որևէ կարծիք չենք հայտնում նախորդ տարվա տվյալների վերաբերյալ:

Ղեկավարության պատասխանատվությունը Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների պատրաստման համար

Բնակավայրի ղեկավարությունը պատասխանատու են տույն հաշվետվությունների «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ին ընդունված թիվ 254-Ն հրամանի պահանջների համապատասխան Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով Բնակավայրի ղեկավարությունը սահմանում են անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվություններ, որոնք զերծ են սխալի արտյունքում ունակ խեղաթյուրումից:

Բյուջեի կատարման հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Բնակավայրի գործունեության անընդհատության, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք բացի գործունեության դադարեցումից:

Բնակավայրի ղեկավարությունը պատասխանատու է Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավատիացում, թե արդյոք Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, չունի էական առումներով զերծ են սխալներից պայմանավորված բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՄ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հայտնաբերել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը բյուջեի կատարման հաշվետվություններում (նրա այդպիսիք առկա են եղել) պայմանավորված բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար:
- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգեր տվյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել բաղարապետարանի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

Crowe

- Գնահատել ենք քաղաքապետարանի ղեկավարության կիրառված հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ողջամիտ գնահատումները և կից բացահայտումները:
- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացության տալու ամսաթիվը:
- Գնահատել ենք Քնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքն և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք այդ հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այնպես, որպեսզի համարվի ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք Էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի Քնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀՈՒՀ): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում (եթե այդպիսիք առկա են), եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտում:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավար Այբերտ Ասատրյանն է, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է:

Այբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր, առաջադրանքի պատասխանատու

16 օգոստոսի 2022թ.

Քրոու ընկ Ասատրյան ՍՊՁ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հոդված դրամ	2021թ. տարեկան Պլան (ճշտված)	2021թ. Փաստացի	2020թ. Փաստացի	Կատարման % 2020թ. նկատմամբ
Եկամուտատեսակներ				
Հարկեր և տուրքեր	115,610,000	187,269,975	140,063,456.8	133.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	206,970,600	201,553,143.40	76,686,100	262.8%
Այլ եկամուտներ	46,410,000	123,595,227.4	129,394,981	95.5%
Ընդամենը եկամուտներ	368,990,600	512,418,345.8	346,144,456.80	148 %
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	(97,024,100)	(83,898,678.2)	(53,435,104.7)	157%
Պաշտպանություն	(3,700,000)	(1,532,000)	(2,142,000)	71.5 %
Հասարակական կարգ, անվտանգություն	(1,700,000)	(1,500,000)	-	-
Տնտեսական հարաբերություններ	(352,717,700)	(294,143,852)	(5,548,280)	5301%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	(110,600,000)	(92,924,238)	(522,537,200)	17.8%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	(67,160,982.3)	(57,767,601.4)	(9,188,894.5)	6.3%
Առողջապահություն	(1,000,000)	(778,000)	(1,000,000)	77.8%
Հանգիստ, մշակույթ և կրոն	(51,427,138)	(42,728,168.9)	(12,838,953.8)	332.8%
Կրթություն	(30,710,000)	(1,880,000)	(2,330,430)	80.7%
Սոցիալական պաշտպանություն	(4,700,000)	(2,100,000)	(3,456,125.8)	0.7%
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	-	-	-	-
Ընդամենը բյուջետային ծախսեր	(720,739,920.3)	(579,252,538.5)	(144,325,788.8)	401%
	(351,749,320.3)	(66,834,192.7)	(201,818,668)	-33.1%

Հաշվետվությունները հաստատվել են **Բնաբակավայրի** ղեկավարության կողմից
2022 թ. Մարտի 10 –ին (էջ 5)

Բյուջեի կատարման հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն

Առինջը բնակավայր է՝ Առինջի բնակչության համայնքն է:

Առինջը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում:
Առինջ բնակավայր (Բնակավայր) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է,ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: Բնակավայրն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք:
Առինջ բնակավայրի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ Առինջի ավագանին և Առինջի ղեկավարը, որոնք գործում են իրենց նստավայրում՝
Գ.Առինջ, Մաշտոցի 51, Կոտայքի մարզ, ՀՀ հասցեում:

Առինջի խորհրդանիշերն են՝
- Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը,
- Հայաստանի Հանրապետության պետական դրոշը,
- Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Ընդհանուր սկզբունքներ

Առինջի բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝
- Բյուջետային համակարգի միասնություն
- Բյուջեի ինքնուրույնություն
- Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն
- Բյուջեի հաշվեկշռվածություն
- Բյուջետային ելքերի ամբողջական ծածկվածություն
- Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն
- Բյուջեի հրապարակայնություն
- Բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն
- Բյուջեի իրատեսություն

Բյուջետային համակարգի միասնականության սկզբունքը նշանակում է իրավական հիմքի, դրամական համակարգի, բյուջետային փաստաթղթերի ձևերի, բյուջետային դասակարգման, բյուջետային գործընթացի սկզբունքների միասնություն:

Բյուջեի ինքնուրույնության սկզբունքը նշանակում է, որ Առինջը որպես ինքնակառավարման մարմին իրավունք ունի բյուջետային օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն իրականացնել բյուջետային գործընթացը:

Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը նշանակում է, որ օրենսդրությամբ սահմանված բյուջեի մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ներառված են արտացոլման բյուջեում: Բնակավայրի բյուջեի բոլոր ելքերը ներառված են ֆինանսավորման բյուջետային համակարգում կատարված բյուջետային միջոցների հաշվին:

Բյուջեի հաշվեկշռվածության սկզբունքը նշանակում է, որ բյուջեով նախատեսված ելքերն ծավալով չպետք է գերազանցեն մուտքերի ծավալը:

Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ բյուջեի կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի, բյուջետային միջոցների նվազագույն օգտագործման կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

Բյուջեի հրապարակայնության սկզբունքը նշանակում է հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարտադիր հրապարակումը, բյուջեի նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարտադիր թափանցիկությունը:

Բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը նշանակում է, որ բյուջետային միջոցները օրենսդրությամբ համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ:

Բյուջեի իրատեսության սկզբունքը նշանակում է Առինջի զարգացման կանխատեսման և դրա հիման վրա բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման իրատեսություն:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է, (դրամ), որն էլ հանդիսանում է բյուջեի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է բյուջեի կատարման հաշվետվությունների հիմքում ընկած իրականացությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար մլռավորը:

2.3 Համապատասխանություն

Բյուջեի կատարման մասին հաշվետվությունը կազմված է երկու հիմնական հաշվետվություններից՝ բյուջեի նկատմամբ կատարման վերաբերյալ և բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություններից:

- Գնահատել ենք Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք այդ հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այնպես, որպեսզի հասարվի ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի Բնակավայրի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀԱՀ): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում (եթե այդպիսիք առկա են), եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտում:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը Ազերտ Ասատրյանն է, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է:

Ազերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր, առաջադրանքի պատասխանատու

16 օգոստոսի 2022թ.

Քրոու ընդ Ասատրյան ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

[illegible]

[illegible]

[illegible]

Հազար դրամ

	տարեկան Պլան (ճշտված) 2021թ	Փաստացի 2021թ	Փաստացի 2020թ	Կատարման % 2020թ նկատմամբ
Եկամտատեսակներ				
Հարկեր և տուրքեր	36,061,600	35,865,392	31,480,451	113.9%
Պետտուրքական դրամաշնորհներ	50,325,023	18,112,700	64,77,423	28%
Այլ եկամուտներ	20,631,900	22,641,476	12,613,691	179.5%
Ընդամենը եկամուտներ	107,018,523	76,619,568	108,872,565	70.4%
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգմամբ բաժինների, խմբերի և դասերի անվանումները				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	(50,751,500)	(42,105,804)	(41,926,511)	100.4%
Պաշտպանություն	(1,300,300)	(1,197,000)	(815,252)	146.8%
Հասարակական կարգ, անվտանգություն	(100,000)	-	-	-
Տնտեսական հարաբերություններ	(24,830,110)	(7,633,623)	(44,829,661)	17%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	(2,160,000)	(1,531,826)	(906,343.2)	169%
Առողջապահություն և կրոն	(64,495,500)	(43,873,114)	(1,125,500)	3887%
Կրթություն	(28,868,718)	(16,305,285)	(67,577,723)	24.1%
Սոցիալական պաշտպանություն	(1,201,000)	(1,180,000)	(670,000)	176.1%
Հիմնական բաժիններին չդասվող Պահուստային ֆոնդեր	(4,387,500)	-	-	-
Ընդամենը բյուջետային ծախսեր	(192,558,208)	(111,945,720)	(78,163,967)	143.2%
	(85,539,685)	(35,326,152)	(30,708,598)	

Հաշվետվությունները հաստատվել են Բնակավայրի ղեկավարության կողմից
2022 թ. Մարտի 10 -ին (էջ 5)

Բյուջեի կատարման հաշվետվությունների կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկատվություն

Վերին Պտղնին բնակավայր է: Վերին Պտղնին բնակչության համայնքն է:

Վերին Պտղնին գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում:
Վերին Պտղնի բնակավայրը (Բնակավայր) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հասարակական կառավարչական հիմնարկ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: Բնակավայրն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք:
Վերին Պտղնի բնակավայրի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ Վերին Պտղնի ավագանին և Վերին Պտղնի բնակավայրի ղեկավարը, որոնք գործում են իրենց նստավայրում՝
Գ. Վերին Պտղնի, Կոտայքի մարզ, ՀՀ հասցեում:

Վերին Պտղնի խորհրդանիշներն են՝

- Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը,
- Հայաստանի Հանրապետության պետական դրոշը,
- Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Ընդհանուր սկզբունքներ

Վերին Պտղնի բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝

- Բյուջետային համակարգի միասնություն
- Բյուջեի ինքնուրույնություն
- Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն
- Բյուջեի հաշվեկշռվածություն
- Բյուջետային ելքերի ամբողջական ծածկվածություն
- Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն
- Բյուջեի հրապարակայնություն
- Բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն
- Բյուջեի իրատեսություն

Բյուջետային համակարգի միասնականության սկզբունքը նշանակում է իրավական հիմքի, դրամական համակարգի, բյուջետային փաստաթղթերի ձևերի, բյուջետային դասակարգման, բյուջետային գործընթացի սկզբունքների միասնություն:

Բյուջեի ինքնուրույնության սկզբունքը նշանակում է, որ Վերին Պտղնին որպես ինքնակառավարման մարմին իրավունք ունի բյուջետային օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն իրականացնել բյուջետային գործընթացը:

Բյուջեի մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը նշանակում է, որ օրենսդրությամբ սահմանված բյուջեի մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման բյուջեում: Բնակավայրի բյուջեի բոլոր ելքերը ենթակա են ֆինանսավորման բյուջետային համակարգում կուտակված բյուջետային միջոցների հաշվին:

Բյուջեի հաշվեկշռվածության սկզբունքը նշանակում է, որ բյուջեով նախատեսված ելքերի ծավալը չպետք է գերազանցի մուտքերի ծավալը:

Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ բյուջեի կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի, բյուջետային միջոցների նվազագույն օգտագործման կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

Բյուջեի հրապարակայնության սկզբունքը նշանակում է, հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարբերաբար հրապարակումը, բյուջեի նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարբերաբար բավականությունը:

Բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը նշանակում է, որ բյուջետային միջոցները օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների շրջանակներում:

Բյուջեի իրատեսության սկզբունքը նշանակում է Վերին Պտղնիի գործոնների կանխատեսման և դրա հիման վրա բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման իրատեսություն:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է բյուջեի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է բյուջեի կատարման հաշվետվություններին հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.3 Համապատասխանություն

Բյուջեի կատարման մասին հաշվետվությունը կազմված է երկու հիմնական հաշվետվություններից՝ բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ և բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվություններից:

Բյուջեի եկամուտների կատարման և բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են Վերին Պտղնի բնակավայրի 2021թ. բյուջեի տարեկան հաստատված պլանը, ճշտված պլանը և փաստացի կատարումը:

Վերին Պտղնի բնակավայրի ղեկավարը բյուջեի նախագիծը ներկայացնում է ավագանու քննարկմանը: Բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում: Վերջնական քննարկումներից հետո հաստատվում է բյուջեի տարեկան պլանը:

Բյուջետային տարվա ընթացքում բնակավայրը կարող է ավելի տարվա Վերին Պտղնի բյուջեի մասին ավագանու որոշմամբ հաստատված հատկացումների ընդհանուր գումարի

Գույքի վարձակալությունից եկամուտներ ներառում են մուրքերը հետևյալ ապրյուրներից բնակավայրի սեփականություն հանդիսացող հողերի, բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի, ինչպես նաև այլ գույքի վարձակալությունից:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները իրենցից ներկայացնում են պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից տրամադրվող միջոցները, օրենքով սահմանված դեպքում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների համար կատարվող գործողությունների դիմաց ստացվող այլ վճարները:

Վարչական գանձումները գոյանում են տեղական վճարներից և բնակավայրի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար կատարված վճարներից:

Մուրքերը՝ տուգանք-տուգանքներից ստացվում են վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից:

4. Բնակավայրի բյուջեի ծախսերի ուղղությունները

Բյուջեի ծախսերի կատարման մասին հաշվետվությունում ծախսերը ըստ գործառական դասակարգման ներկայացվում են հետևյալ կերպ՝

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
- Պաշտպանություն
- Տնտեսական հարաբերություններ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
- Առողջապահություն
- Հանգիստ, մշակույթ և կրոն
- Կրթություն
- Սոցիալական պաշտպանություն
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝

Վերին Պտղնիի բյուջեի վարչական մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների հետ կապված ընթացիկ, պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման և ֆոնդային մասի միջոցների մասհանումների գծով ծախսերը Վերին Պտղնի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների հետ կապված կապիտալ ծախսերը՝

15 տոկոսի սահմաններում վերաբաշխել հատուկացումների գումարները այդ որոշումով սահմանված ծախսային ծրագրերի միջև, եթե տվյալ տարվա Վերին Պտղնիի բյուջեի մասին ավագանու որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Բյուջետային տարվա ընթացքում Բնակավայրի ղեկավարը կարող է կատարել յուրաքանչյուր ծրագրի գծով Վերին Պտղնիի բյուջեի մասին ավագանու որոշմամբ սահմանված հատկացումների ընդհանուր գումարի 15 տոկոս չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև, եթե տվյալ տարվա Վերին Պտղնիի բյուջեի մասին ավագանու որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Բյուջեի կատարումը Վերին Պտղնի բնակավայրի բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կազմակերպված գործունեություն է:

Վերին Պտղնիի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նախատեսված է Վերին Պտղնիի զարգացման ծրագրի, ինչպես նաև ավագանու և Բնակավայրի ղեկավարի օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար: Վերին Պտղնիի բյուջեն ընդունվում է մեկ տարով: Բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Բյուջեն կատարվում է օրենքով սահմանված կարգով:

Վերին Պտղնիի բնակավայրի միջոցների մուտքերը և ելքերը ազատագրվում են հատուկ բացված գանձապետական հաշիվներում: Գանձապետական հաշիվներից գումարների վճարումը կատարվում են բյուջետային միջոցների առկայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերին Պտղնիի բյուջեի վարչական և ֆոնդային մասերին ամրագրվող բյուջետային մուտքերի աղբյուրները սահմանվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսգրքով, իսկ այդ աղբյուրների հաշվին Վերին Պտղնիի բյուջեի համապատասխան մասերից ելքերի իրականացման ուղղությունները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսգրքով:

Բյուջետային տարվա համար Վերին Պտղնի բյուջեի յուրաքանչյուր (վարչական և ֆոնդային) մասում նախատեսված հաշվարկային-պրոգնոզային ելքերը չեն կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի համապատասխան մասերով նախատեսված հաշվարկային պրոգնոզային մուտքերը:

Բյուջեի ծախսերի նկատմամբ նկամուտների գերազանցումը կազմում է բյուջեի հավելուրդը, իսկ բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը՝ բյուջեի պակասուրդը:

3. Բնակավայրի բյուջեի եկամուտների աղբյուրները

Վերին Պտղնիի բյուջեի եկամուտները օրենսդրությանը համապատասխան անվերադարձ կտրվող սեփական դրամական միջոցներն են: Վերին Պտղնիի բյուջեն հետևյալ աղբյուրներն ունի՝

- Հարկեր և տուրքեր
- Պետտուրքեր և վճարներ

- Այլ եկամուտներ:

3.1 Հարկեր և տուրքեր

Վերին Պտղնիի բյուջեն ձևավորվում է հարկերի և տուրքերի հաշվին Վերին Պտղնիի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրված մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- հողի հարկ՝ Վերին Պտղնիի վարչական տարածքում գտնվող հողի համար
- գույքահարկ՝ Վերին Պտղնիի վարչական տարածքում գտնվող գույքի համար
- պետական տուրք՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու և նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու համար
- տեղական հարկեր, տուրքեր և վճարներ, այլ եկամուտներ:

3.2 Պաշտոնական դրամաշնորհներ

Վերին Պտղնիի բյուջեն ձևավորվում է պաշտոնական դրամաշնորհների հաշվին Վերին Պտղնիի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրված մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ
- պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ և ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ
- այլ աղբյուրներից ստացվող դրամաշնորհներ:

3.3 Այլ եկամուտներ

Վերին Պտղնիի բյուջեն ձևավորվում է այլ եկամուտների հաշվին Վերին Պտղնիի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրված մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝

- տոկոսներ
- շահութաբաժիններ
- գույքի վարձակալություն
- ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից
- վարչական գանձումներ
- մուտքեր տույժերից, տուգանքներից
- ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ
- կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ
- այլ եկամուտներ:

Շահութաբաժինները, երբ այդպիսիք առաջանում են, ներառում են բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց բնակավայրի բյուջե կատարվող մուտքերը:

Բյուջեի միջոցների հաշվին կապիտալ ծախսերը իրականացվում են հիմք ընդունելով համայնքի կապիտալ ներդրումների ծրագիրը, ինքնակառավարման մարմինների որոշումները, ծախսերի կատարման փուլերն ու ժամկետները:

Բյուջեի միջոցների հաշվին ապրանքներ գնելու, աշխատանքներ կատարելու և ծառայություններ մատուցելու ծախսերի ֆինանսավորումը իրականացվում է, պետական գնումների մասին օրենքով սահմանված կարգով.

Crowe

Նամակ ղեկավարությանը

Վերին Պտղնի բնակավայրի

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Ընթացիկ ժամանակաշրջանի դիտարկումներ 5

Crowe

Աբովյանի համայնքապետին և ավագանու անդամներին

Համաձայն "Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ -ի և Աբովյան համայնքի միջև 2022թ. Մայիսի 04-ին կնքված ""ԱԲՀ-ԳՀԾՁԲ -22/13 պայմանագրի՝ մենք աուդիտի ենք ենթարկել Աբովյան համայնք (այսուհետ "Համայնք) 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման հաշվետվությունները: Աուդիտի ընթացքում բացահայտել ենք խնդիրներ, որոնք կարող են արժանանալ Աբովյանի համայնքապետի և ավագանու անդամների ուշադրությանը: Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ համոզվելու համար, որ բյուջեի կատարման հաշվետվությունները չեն պարունակում էական սխալներ և, հետևաբար, այն չէր նախատեսվել թերությունները բացահայտելու ու Աբովյանի համայնքապետին և ավագանու անդամներին տեղեկացնելու համար: Հետևաբար, աուդիտը չի ներառում ամենատեսակ բոլոր թերությունների բացահայտումը: Մենք սույն նամակում ներառել ենք այնպիսի թերություններ, որոնք էականորեն կազդեն Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների վրա:

Կից ներկայացված դիտարկումները ու առաջարկությունները նպատակ ունեն օժանդակելու Աբովյան համայնքի և նրա կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի բյուջեի կատարման հաշվետվությունների բարելավման գործում:

Սույն նամակում ներկայացված դիտարկումները չեն բացահայտում Համայնքի ներքին վերահսկողության համակարգում առկա բոլոր թերությունները: Աուդիտի հիմնական նպատակն է կարծիք արտահայտել Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների վերաբերյալ: Այս նպատակին հասնելու համար մենք ուսումնասիրել ենք Համայնքի ներքին վերահսկողության համակարգը՝ որոշելու, թե որքանով կարող ենք հիմնվել այդ համակարգի վրա՝ աուդիտորական ընթացակարգերը պլանավորելու նպատակով: Այնուամենայնիվ, այս ուսումնասիրությունները չէին կարող բացահայտել բոլոր այն թերությունները, որոնք կարող էին բացահայտվել Համայնքի ներքին վերահսկողության համակարգի հատուկ ստուգումների իրականացման ժամանակ:

Սույն նամակը պատրաստվել է միայն Աբովյան համայնքի ղեկավարության համար և նախատեսված չէ այլ նպատակների համար:

Crowe

Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում Ձեզ և Ձեր աշխատակազմին աուդիտի ընթացքում ցուցաբերած համագործակցության և օժանդակության համար:

Ընկերության արձագանքը

Սույն նամակում նկարագրված դիտարկումների վերաբերյալ համայնքապետարանի գրավոր արձագանքների նկատմամբ մենք չենք կիրառել աուդիտորական ընթացակարգեր և, հետևաբար, չենք արտահայտում կարծիք դրանց վերաբերյալ:

Հարգանքով՝

Արթուր Ասատրյան

Տնօրեն-Համատեր,
Առաջադրանքի պատասխանատու

11 օգոստոսի 2022թ.

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Վերին Պտղնի բնակավայրի Ընթացիկ ժամանակաշրջանի դիտարկումներ

1. Ֆինանսական Հաշվետվություններ

1.1 *Դիտարկում*

Բնակավայրի 2021թ -ի համար չի կազմել ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթ:

Հետևանք

Խախտվել է "Հանրային Հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին« ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետը և ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. նոյեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանի հավելվածով սահմանված Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի պատրաստման և ներկայացման հետ կապված պահանջները 3.2կետ, 3.19կետ :

Առաջարկ

Առաջնորդվել "Հանրային Հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին« ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետը և ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. նոյեմբերի 24-ի թիվ 725-Ն հրամանի հավելվածով սահմանված Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի պատրաստման և ներկայացման հետ կապված պահանջները 3.2կետ, 3.19 կետի պահանջներով:

Ձեռնարկության արձագանք

2. Հաշվապահական ձևակերպումներ

2.1 *Դիտարկում*

Բնակավայրի կողմից չի պահպանվել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները.

Մասնավորապես՝

1. Կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա.

2. Անընդհատ կազմակերպության սկզբնական գրանցման պահից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

3. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

4. Կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության) կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը, որի համաձայն գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են:

Հետևանք

Խախտվել է Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը:

Առաջարկ

Առաջնորդվել Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջով:

Ղեկավարության արձագանք

2.2 *Դիտարկում*

Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ բնակավայրի կողմից չի կիրառվում ապրանքանյութական արժեքների հաշվառում սկզբնական հաշվառման փաստաթղթեր և գրանցամատյաններ, մասնավորապես բացակայում էին՝
- Մուտքի օրդեր (ձև Պ-2)
- Պահանջագիր-բեռնագիր (ձև Պ-2)
- Պահեստում պաշարների շարժի հաշվետվություն (ձև Պ-9)
- Հաշվապահական հաշիվների շրջանառության տեղեկագիր (ձև ՖՀ-1)
- Հիմնական միջոցների շրջանառության (ըստ դասերի) տեղեկագիր (ձև ՖՀ-2):

Հետևանք

Խախտվել է Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ պահանջները և ՀՀ ֆինանսների

նախագծի 2016 թ-ի փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանի հավելված 1 և հավելված 2-ի պահանջները:

Առաջարկ

Առաջարկվել՝ Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ պահանջները և ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թ-ի փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանի հավելված 1 և հավելված 2 ի պահանջները համապատասխան:

Ղեկավարության արձագանք

2.3 *Դիտարկում*

Բնակավայրի ղեկավարի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականություն չի սահմանվել:

Հետևանք

Խախտվել է՝ Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 8 –րդ հոդվածի 3 րդ կետի 1 ին ենթակետը:

Առաջարկ

Առաջարկվել՝ Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 8 րդ հոդվածի 3 րդ կետի 1 ին ենթակետի պահանջով:

Ղեկավարության արձագանք

2.4 *Դիտարկում*

Հետևանք

Բնակավայրի՝ հաշվապահական հաշվառումը չի վարել համակարգչային ծրագրերով:

Խախտվել է՝ Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 6 րդ հոդվածի 1-ին կետը:

Առաջարկ

Առաջարկվում՝ Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի 6 րդ հոդվածի 1-ին կետի պահանջով:

Ներկայացրության արձագանք

3. Աշխատանքներ

3.1 *Դիտարկում*

Աշխատակիցների աշխատանքային պայմանագրերում չեն կատարվել փոփոխություններ՝ աշխատանքային պայմանագրում նշված աշխատավարձի չափը չի համապատասխանում հաստիքային ցուցակի նշված դրույքաչափին:

Հանձնարարական

Խախտվել է՝ Աշխատանքային օրենսգրքի 84.1-րդ հոդված 2-րդ կետը, Աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդված 3-րդ կետը:

Առաջարկ

Առաջարկվում՝ Աշխատանքային օրենսգրքի 84.1-րդ հոդված 2-րդ կետին 105-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով:

Ներկայացրության արձագանք

3.2 *Դիտարկում*

Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիրը չի համապատասխանում հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման օրինակելի ձևին:

Հանձնարարական

Խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ N 37-Ն հրամանի աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի (ձև ԾԽ-5):

Առաջարկ

Առաջարկվում՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ N 37-Ն հրամանի աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի (ձև ԾԽ-5)-ի պահանջներին:

Ընկերության արժագրեր

4. Հիմնական միջոց

4.1 *Դիտարկում*

Բնակարանի՝ կողմից հիմնական միջոցների մաշվածություն չի հաշվարկվել :

Հետևանք

Խախտվել է ՀՀ Ֆինանսների նախարարի 2014թ. հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն "ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտե հրամանի Բաժին 11. "Հիմնական միջոցներե-ի պահանջներին :

Առաջարկ

Հետևել ՀՀ Ֆինանսների նախարարի 2014թ. հոկտեմբերի 24-ի թիվ 725-Ն "ՀՀ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտե հրամանի Բաժին 11. "Հիմնական միջոցների պահանջներին:

Ընկերության արժագրեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 142-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԵՐ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-604-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Մարտին Արթուրի Հովհաննիսյանի դիմումը (մուտք՝ 27.10.2022թ. N Ք-5441), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1.Տալ համաձայնություն որպես նվեր ընդունել Աբովյան համայնքի բնակիչ Մարտին Հովհաննիսյանին պատկանող 2000 թվականի արտադրության MITSUBISHI CANTER MAMLIFT 3.6 ավտոաշտարակը (VIN FE53EB-552123):

2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ ապահովել նվիրատվության պայմանագրի կնքման գործընթացը և դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 143-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 336-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ փոփոխությունները և լրացումները կատարելու համար՝

1) ՈՒԺը կորցրած ճանաչել անվանացանկի հետևյալ կետերը՝

համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբի 23-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-23) և 25-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-25) կետերը:

2) Անվանացանկում անվանափոխել հետևյալ կետերը՝

ա. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի 6-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետ» (ծածկագիր՝ 2.1-6) բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի պետ» (ծածկագիր՝ 2.1-6) բառերով.

բ. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբի 16-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-16) և 17-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-17) բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-16) և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի

գնումների բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-17) բառերով.
գ. համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբի 22-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-22) և 24-րդ կետի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումների բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-24) բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-22) և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-24) բառերով.
3) Անվանացանկը լրացնել հետևյալ կետերով՝
ա. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել նոր 9-րդ կետով՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի պետ» (ծածկագիր՝ 2.1-9).
բ. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբը լրացնել նոր 4-րդ կետով՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի տեղակալ» (ծածկագիր՝ 2.2-4).
գ. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախումբը լրացնել նոր 21-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության և քաղաքացիների սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-21), 22-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-22), 23-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-23) և 24-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-24) կետերով.
դ. համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել նոր 33-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-33), 34-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-34), 35-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-35), 36-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-36) և 37-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-37) կետերով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ԶԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 144-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 143-Ա որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***՝

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 05-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ում և հավելված 2-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված հավելված 1-ում «Կառուցվածքային ստորաբաժանումներ» մասի 6-րդ կետում «Զարգացման ծրագրերի և գնումների բաժին» բառերը փոխարինել «Գնումների բաժին» բառերով, հավելված 1-ը լրացնել նոր՝ 9-րդ կետով՝ «Զարգացման ծրագրերի բաժին» բառերով,

2) որոշմամբ հաստատված հավելված 2-ի 1-ին կետում «170» թիվը փոխարինել «179» թվով, 2-րդ կետի «Քարտուղարության և քաղաքացիների սպասարկման բաժին» մասի 24-րդ տողի 3-րդ սյունակում «1» թիվը փոխարինել «2» թվով, 5-րդ սյունակում «332 000» թիվը փոխարինել «664 000» թվով, ընդամենը տողի 3-րդ սյունակում «12» թիվը փոխարինել «13» թվով», 5-րդ սյունակում «3 572 000» թիվը փոխարինել «3 904 000» թվով,

«Իրավաբանական բաժին» մասը լրացնել նոր՝ 27.1 կետով հետևյալ խմբագրությամբ՝

27.1	բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000

ընդամենը տողի 3-րդ սյունակում «10» թիվը փոխարինել «11 թվով», 5-րդ սյունակում «3 104 000» թիվը փոխարինել «3 473 000» թվով:

«Զարգացման ծրագրեր և գնումների բաժին» բառերը փոխարինել «Գնումների բաժին» բառերով: Բաժնի 38-րդ տողի 3-րդ սյունակում «4» թիվը փոխարինել «2» թվով, 5-րդ սյունակում «1 192 000» թիվը փոխարինել «596 000» թվով, ընդամենը տողի 3-րդ սյունակում «7» թիվը փոխարինել «5» թվով», 5-րդ սյունակում «2 266 000» թիվը փոխարինել «1 670 000» թվով,

«Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին» մասի 45-րդ տողի 3-րդ սյունակում «2» թիվը փոխարինել «3» թվով, 5-րդ սյունակում «596 000» թիվը փոխարինել «894 000» թվով, ընդամենը տողի 3-րդ սյունակում «6» թիվը փոխարինել «7» թվով», 5-րդ սյունակում «1 874 000» թիվը փոխարինել «2 172 000» թվով:

Հավելված 2-րդը լրացնել «Զարգացման ծրագրերի բաժին» մասով՝ հետևյալ խմբագրությամբ՝

46.1	Բաժնի պետ	1	410 000	410 000
46.2	Գլխավոր մասնագետ	3	332 000	996 000
46.3	Առաջատար մասնագետ	4	298 000	1 192 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	8		2 598 000

Հավելված 2-ի վերջին տողի 3-րդ սյունակում «170» թիվը փոխարինել «179» թվով, 5-րդ սյունակում «48 242 000» թիվը փոխարինել «51 243 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոխոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -2

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Դ. ՋԱՐՈՅԱՆ

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 145-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԳՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Ներսես Գեղամի Վիրաբյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հոկտեմբերի 05-ի N Ք-5007), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Տալ համաձայնություն 10 000 000 (տաս միլիոն) դրամ արժեքով գնելու քաղաքացի Ներսես Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2004 թվականի հունվարի 13-ին տրված թիվ 1640307 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող անշարժ գույքը:

2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ ապահովել անշարժ գույքի գնման պայմանագրի կնքման գործընթացը և դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 146-Ա

«ԱԲՈՎՅԱՆԻ N 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. «Աբովյանի N 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Կազմակերպության կանոնադրությունում կատարել սույն որոշման 1-ին կետից բխող համապատասխան փոփոխությունները և հաստատել կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 17-ի N 146-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք.Աբովյան 2022 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

Հաստատության հիմնադիրն է Աբովյան համայնքը:

Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը համարվում է անվանափոխված «Աբովյանի N 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցահամարը՝ N 11.210.02301, վկայական՝ 03Ա070635) իրավահաջորդը, որը ստեղծվել է Աբովյանի թիվ 2 մսուր-մանկապարտեզ բյուջետային հիմնարկի (գրանցահամարը՝ 11.0127, վկայական՝ Բ 004433) վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ 2201, ք. Աբովյան, Բարեկամության փողոց, թիվ 1/6:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Детский сад номер 2 города Абовяна» общинная некоммерческая организация Абовянской общины.

4) ռուսերեն կրճատ՝ «Детский номер 2 города Абовяна» ОНКО Абовянской общины.

5) անգլերեն լրիվ՝ "Kindergarten number 2 in Abovyan City" of Abovyan Community Non-Profit Communal Organization.

6) անգլերեն կրճատ՝ "Kindergarten number 2 in Abovyan City" of Abovyan Community NPCO:

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է

հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը

համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.

2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.

3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.

4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.

5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սանների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սանների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.

2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.

3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.

4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.

5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆառորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության

օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի

հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

65. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

66. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

67. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

68. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

69. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

70. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

71. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

72. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 158-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԻ ԽՈՐ. ԱԲՈՎՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 25-Ն և 26-Ն որոշումների և հիմք ընդունելով Արմեն Ավետիսյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 4-ի N Ք-5611), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Արմեն Ռազմիկի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 14092021-07-0074 վկայական) Առինջ գյուղի Խ. Աբովյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող 07-011-0075-0025 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 760.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 03-ի N 03112022-07-0108 վկայական) Առինջ գյուղի Խ. Աբովյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 11/1 հասցեում գտնվող 07-011-0075-0073 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 158.4 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-011-0075-0025 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Արմեն Ռազմիկի Ավետիսյանին:

2. Արմեն Ռազմիկի Ավետիսյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 2 562 374 (երկու միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր յոթանասունչորս) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում է Արմեն Ռազմիկի Ավետիսյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Ռազմիկի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ԶԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 159-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0306-0047 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Աշոտ Ռևազյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ի N Ք-5556), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աշոտ Ռևազյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 24-ի N 24082022-07-0051 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0306-0047 կադաստրային ծածկագրով 0.0715 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի, բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներով) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Ռևազյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 160-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0306-0049 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Կարեն Ադամյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 3-ի N Ք-5577), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Կարեն Ադամյանին և Շողեր Վարդանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հոկտեմբերի 12-ի N 12102022-07-0123 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0306-0049 կադաստրային ծածկագրով 0.1838 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի, բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներով) տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 161-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1.21 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.44725 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 15-ի N 1/փ-278 դրական եզրակացությունը, հաշվի առնելով «ՎԱԼԱՆ ԴԵԿՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2021 թվականի ապրիլի 23-ի N S-239) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. «ՎԱԼԱՆ ԴԵԿՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2018 թվականի օգոստոսի 22-ի N 22082018-07-0104 վկայական) Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող 1.21 հեկտար մակերեսով հողամասից 0.44725 հեկտար մակերեսով հատուկ նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 162-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՐԳԵԼ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-058-0002-0185 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով Հովիկ Ազիզյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի սեպտեմբերի 12-ի N Ք-4598) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի N 138 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հովիկ Ազիզյանին վարձակալության իրավունքով պատկանող՝ (հիմք՝ 2022 թվականի հունիսի 14-ի N 14062022-07-0156 վկայական, կադաստրային ծածկագիր՝ (07-058-0002-0185) համայնքային սեփականություն հանդիսացող Աբովյան համայնքի Գետարգել գյուղի Հ. Վերդյան փողոցի թիվ 21/7 հասցեում գտնվող 0.11361 հեկտար մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովիկ Ազիզյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 163-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. 2022 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված բնակելի և հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ԶԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 17-ի
N 163-Ա որոշման

ՑԱՆԿ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ

Հ/Հ	Հասցեն	Վկայականի համարը	Անշարժ գույքի անվանումը
1	2	3	4
1	ք. Աբովյան, Գառնու փող. թիվ 7/8	13092022-07-0130	կրպակ
2	ք. Աբովյան, 7-րդ մ/շրջան, 1-ին թաղ. թիվ 68/3	10102022-07-0014	ավտոտնակ, հարթակ, պարիսպ
3	ք. Աբովյան, Պիոներական փող. թիվ 9/20	27102022-07-0007	սպասարկման օբյեկտի մաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 164-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2022-2023 թվականների ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

Հավելված

Արովյան համայնքի ավագանու
2022 թականի նոյեմբերի «17»-ի
N 164 որոշման

ՑԱՆԿ

2022-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակերեսի չափը (քառ. մ.)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	Հողամասի օտարման մեկնարկային գինը (հազ. դրամ)
1	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան 5-րդ թաղամաս, թիվ 105	400,00	07-002-025-162	բնակավայրերի	տնամերձ	**5468.0**
2	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան 5-րդ թաղամաս, թիվ 113	400,00	07-002-025-175	բնակավայրերի	տնամերձ	**5468.0**
3	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սևանի փողոց, 2/9	101,70	07-002-0049-0769	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3291.0
4	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, 33/4	274,10	07-002-0140-0002	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1827.0
5	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, 16/7	1210,90	07-002-0103-0212	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	10758.0
6	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց, 32/2	47,80	07-002-0040-0342	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1508.0
7	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 366/1	23,90	07-002-0049-0768	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1160.0
8	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 27/1	21,30	07-002-0049-0765	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1034.0
9	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երևանյան փողոց, 94	67,70	07-002-0146-0150	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	**1389.0**
10	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Է. Պետրոսյան փողոց, 31/1	913,40	07-002-0048-0199	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	12172.0

11	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ինտերնացիոնալի փողոց, 3/1	71,80	07-002-0075-0072	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2323.0
12	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց, 113/1	5,30	07-002-0039-1695	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	558.0
13	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 5/1	24,00	07-002-0039-1692	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	757.0
14	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Շուշի թաղամաս, 113	61,90	07-002-0039-1699	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1100.0
15	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Շուշի թաղամաս, 103	225,00	07-002-0039-1697	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2000.0
16	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց, 4/5	60,00	07-002-0089-0357	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1262.0
17	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Խ. Աբովյան թաղամասի 12-րդ փողոց, 12	1000,00	07-011-0356-0007	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	10514.0
18	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Խ. Աբովյան թաղամասի 31-րդ փողոց, 11	1000,00	07-011-0380-0010	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	10514.0
19	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Խ. Աբովյան թաղամասի 31-րդ փողոց, 9	1000,00	07-011-0380-0012	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	10514.0
20	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Օգոստոսի 23-ի փողոց, 7	133,20	07-002-0049-0767	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	4310.0
21	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 44/5	33,90	07-002-0039-1700	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1071.0
22	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց, 2/23	108,10	07-002-0089-0358	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2274.0
23	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, 78/1	50,90	07-002-0025-0226	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1044.0
24	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 18/14	20.0	07-002-0039-1693	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	844.0
25	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Է. Պետրոսյան փողոց, 14/1	54,60	07-002-0121-0022	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	1767.0
26	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 3/313/4	20.0	07-002-058-075	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	648.0
27	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 444/1	19,40	07-002-0049-0771	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	628.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 165-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ «ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Հավանություն տալ Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի ՈՒսանողական թաղամասի թիվ 4 հասցեում գտնվող «Աբովյանի Պետական Էներգետիկական Քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում 1.84 հեկտար հողամասի վրա (հատակագիծը կցվում է) «Մելիք Պրոջեքթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «Բնակելի թաղամասի կառուցման» ներդրումային ծրագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՅՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Դ. ՋԱՐՈՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 17
ք. Աբովյան

ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

1. Ներդրման նկարագրություն

«Մելիք Պրոջեքթ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնվող քաղաքաշինական ծրագիրը նախատեսում է փոքր բնակելի թաղամասի ձևավորում՝ հարմարավետության նորարարական լուծումներով և 5-ից 6 վերգետնյա հարկայնության շենքերով: Նախաձեռնված ծրագրի իրականացման նպատակով ուսումնասիրվել են շուկայում առկա տարբեր հողատարածքներ, այդ թվում՝ Երևան քաղաքում: Թեև թե պահանջարկի և թե վաճառքի գների համեմատական վերլուծությամբ Երևան քաղաքում նման ծրագրի իրականացումը շահավետ է, սակայն նախաձեռնված ծրագրին համապատասխան անհրաժեշտ չափի հողամասի բացակայությունը, խիտ կառուցապատված քաղաքաշինական միջավայրը, ինչպես նաև հողամասերի գինը, առավել ևս շենքերից բացի այլ ենթակառուցվածքների ստեղծման համար անհրաժեշտ հողամասերի համար, առավել նպատակահարմար դարձրեցին ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողամաս դիտարկել Երևան քաղաքից ոչ շատ հեռու համայնքներում: Նշվածով պայմանավորված ուսումնասիրությունների արդյունքում որպես ծրագրի չափորոշիչներին համապատասխան հողամաս դիտարկվեց ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամաս թիվ 4 փողոցի տարածքում գտնվող, 07-002-0064-0001 կադաստրային ծածկագրով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29112013-07-0061) (այսուհետ՝ Հողամաս)՝, որը թեև անբարեկարգ և լրացուցիչ որոշակի շերտերի մաքրման անհրաժեշտություն պահանջող վիճակում է, սակայն գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի համեմատաբար բարձր պահանջարկ և տեղակայման գրավչություն ունեցող վայրում, իսկ հարևանությամբ առկա են հիմնականում առանձնատներ, բնակելի բարձրահարկ շենքեր, հասարակական օբյեկտներ: Հողամասը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմին:

Հաշվի առնելով, որ նշված հողամասը իր չափերով և տեղադիրքով համապատասխանում է նախաձեռնված ծրագրի չափորոշիչներին, մշակվեց էսքիզային նախագիծ և կատարվեցին որոշակի նախնական հաշվարկներ, ինչի արդյունքում այդ հողամասում ներդրումային ծրագրի իրականացումը համարվեց իրագործելի: Դրանք հիմք հանդիսացան ներդրումային ծրագրի մշակման և հողամասի ձեռքբերման փոխշահավետ, այդ թվում՝ հանրային շահ հետապնդող առաջարկ ձևավորելու համար:

Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված թաղամասի կառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալը կկազմի շուրջ 4,708,813,250 (*Չորս միլիարդ յոթ հարյուր ութ միլիոն ութ հարյուր տասներեք հազար երկու հարյուր հիսուն*) ՀՀ դրամ:

Ներդրումները նախատեսվում է իրականացնել՝

ա/ սեփական ուժերով՝ այդ թվում վարկային միջոցներ ներգրավելու արդյունքում,

բ/ այլ ներդրողներից գումարներ ներգրավելու միջոցով,

գ/ թաղամասի կառուցապատվող տարածքների վաճառքից առաջացած միջոցներով՝ պայմանով, որ կիրականացվի ներդրումային ծրագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

Ներդրումային ծրագրով «Մելիք Պրոջեքթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ներդրող) նախատեսում է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմից (այսուհետ՝ Վաճառող) ուղղակի վաճառքի ձևով կադաստրային արժեքով ձեռք բերել ՀՀ Կոտայքի մարզ Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամաս թիվ 4 քոլեջի տարածքում գտնվող 4,70698 հա մակերեսով՝ 07-002-0064-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 1,84 հա (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29112013-07-0061), պարտավորվելով իրականացնել սույն բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագիրը հետևյալ չափորոշիչներով.

1. տարածքի կառուցապատման մակերեսը նախատեսել մինչև 29,3%, որը ներառելու է թվով 10 բնակելի շենքեր՝ հասարակական տարածքներով, որոնք պետք է ապահովեն թաղամասի կենսապահովման համար անհրաժեշտ ծառայությունների առկայությունը: Նախնական էսքիզային նախագծով կառուցապատման մակերեսը նախատեսվել է 5400 քմ (29.3%),

2. կառուցվող բնակելի շենքերի հարկայնությունը նախատեսել 5-ից 6 վերգետնյա հարկ, թաղամասի կառուցապատման ընդհանուր ծավալը կկազմի շուրջ 30 080 քմ,

3. թաղամասի կենսապահովման նպատակով պետք է կառուցվեն անհրաժեշտ բոլոր ինժեներական ենթակառուցվածքներն ու հաղորդակցուղիները,

4. պետք է իրականացվեն թաղամասի՝ կառուցապատման ոչ ենթակա, ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում՝ խաղահրապարակների կառուցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներն ու պետք է ապահովվեն դրանց հետագա պատշաճ սպասարկումն ու խնամքը: Ընդ որում, տարածքի առնվազն 40 %-ը պետք է կազմեն կանաչապատման գոտիները,

5. պետք է ապահովվի թաղամասի հարմարավետ ճանապարհային ենթակառուցվածքի առկայությունը՝ տարածքի առնվազն 17%-ը նախատեսելով ճանապարհների կառուցման համար,

6. թաղամասի կառուցապատման աշխատանքները պետք է մեկնարկեն համապատասխան շինարարության (այդ թվում՝ հողային աշխատանքների և/կամ քանդման) թույլտվություններ ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում և թաղամասն ամբողջությամբ շահագործման պետք է հանձնվի 3 (Երեք) տարվա ընթացքում: Ընդ որում, կառուցապատման աշխատանքները կիրականացվեն 3 փուլերով՝ առաջին փուլում կկառուցվի 3 շենք, երկրորդ փուլում՝ 4 շենք, և երրորդ փուլում՝ 3:

7. Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով Վաճառողը Ներդրողի հետ կնքում է Հողամասի օտարման և գրավի, ինչպես նաև նվիրատվության պայմանագրեր: Ներդրողի սեփականության իրավունքը Հողամասի նկատմամբ ծագում է Հողամասի օտարման և գրավի պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից և

Հողամասն անմիջապես գրավադրվում է Համայնքի մոտ՝ որպես Հողամասի կադաստրային արժեքի վճարման պարտավորության կատարման ապահովման միջոց: Ընդ որում, Հողամասը կազատվի սահմանափակումներից Հողամասի կադաստրային արժեքը ամբողջությամբ վճարելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

8. բոլոր բնակարանների ջերմամեկուսացումը համապատասխանելու է A դասի շենքերի պահանջներին, ինչպես նաև տեղադրված են լինելու արևային էլեկտրաէներգիայի կուտակիչներ:

9. բացի այդ, Ներդրողը պարտավորվում է Հողամասի այն հատվածում, որը ներառված չէ ներդրումային ծրագրի մեջ (որի մակերեսը կազմում է մոտավորապես 1,84 հա), որտեղ տեղակայված է քոլեջի շենքը, իրականացնել բարեկարգման աշխատանքներ, մասնավորապես՝ ցանկապատել, ասֆալտապատել ճանապարհները, իրականացնել կանաչապատում, լուսավորում, ծառատունկ:

Ներդրումային ծրագրի կազմման ընթացքում հավաքագրվել և ուսումնասիրվել են Հողամասի ելակետային տվյալները, ինչպես գործարար ծրագրի կազմման և արդյունավետության գնահատման, այնպես էլ քաղաքաշինական գործունեության իրականացման տեսանկյուններից: Մասնավորապես, իրականացվել են նախնական ճարտարագիտաերկրաբանական հետազոտություններ, ուսումնասիրվել է Հողամասի երկրաբանական կառուցվածքը, իրականացվել են նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքագրում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն, տեղադիտական հետազոտություններով դիտարկվել են հնարավոր վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները /սողանք, քարաթափում-ճահճացում և այլ/, որոնց մասով ստացվել են ներդրումային ծրագրի իրականացման համար դրական արդյունքներ:

Հողամասը ընդգրկված է ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի №1023-Ն և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված տարածագնահատման 10-րդ գոտում, որտեղ բնակավայրերի նշանակության հողերի 1քմ կադաստրային արժեքը կազմում է 6834 ՀՀ դրամ: Հողամասի հիմնական յուրահատկությունն այն է, որ այն կրում է սահմանափակ ֆիզիկական բնույթ և ներդրումային ծրագրի իրականացմամբ ակնհայտորեն առաջ է գալիս հողի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման գաղափարը:

Հողամասի տեխնիկական նկարագրությունը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Հասցե	Կոտայքի մարզ Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամաս թիվ 4 քոլեջի տարածք
Տարածագնահատման գոտին	10
Տարածագնահատման գոտու կադաստրային արժեք /ՀՀ դրամ/	6834

Կադաստրային ծածկագիրը /հղում www.cadastre.am կայքից	07-002-0064-0001
Նպատակային նշանակությունը*	**բնակավայրերի**
Գործառնական նշանակությունը	**Հասարակական կառուցապատման**
Ընթացիկ օգտագործումը	Չի օգտագործվում
Սահմանափակումներ	Տեղեկատվություն տրամադրված չէ
Գույքային իրավունքերը	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ
Տեղադրությունը	Լավ
Դիրքը	Լավ
Ճակատային եզրագիծը	Երկրորդային նշանակության փողոցների հետ
Տարածաշրջանի գրավչությունը	Միջինից բարձր
Տրանսպորտային մատչելիությունը	Լավ
Ճանապարհները	Ասֆալտապատ
Մեքենաների կայանման հարմարավետությունը	Լավ
Հեռավորությունը հասար. սպասարկ. օբյեկտներից	50մ շառավղով
Երկրաչափական տեսքը	Անկանոն
Մակերեսը /քմ/	Համաձայն հավաքագրած տեղեկատվության՝ 18400 քմ
Շրջակա միջավայրը	Առանձնատներ, բազմաբնակարան շենքեր, հասարակական օբյեկնտեր, այլ շենքեր
Բարեկարգված բակի առկայությունը	Առկա չէ
Ենթակառուցվածքների առկայությունը	Ունի բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքների անցկացման հնարավորություն
Այլ տեղեկատվություն	Կից ներկայացված է նաև նախնական էսքիզային առաջարկը

* Հողամասի նպատակային նշանակությունը անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով կհամապատասխանեցվի ծրագրին:

Հողամասի տեղակայման վայրը



Ներդրումային ծրագրի մշակման և ծրագրով նախատեսվող բնակարանների ծրագրվող արժեքին հանգելու համար առանձնացվել են ստորև նշված գործոնները, որոնց ազդեցությունը արժեքի ձևավորման վրա զգալի բարձր է: Դրանցից են՝

- ✓ հողամասի տեղադրությունը և դիրքը,
- ✓ հողամասի հեռավորությունը հասարակական օբյեկտներից և տրանսպորտային հանգույցից,
- ✓ հողամասի մոտակայքում այգիների առկայությունը,
- ✓ շենքում բնակարանների քանակը, շենքի հարկայնությունը և հարկը,
- ✓ սենյակների դասավորությունը և պատշգամբների առկայությունը,
- ✓ հարդարման վիճակը,
- ✓ մեքենաների կայանման հնարավորությունը,
- ✓ լուսավորության ապահովումը նաև արևային էներգիայով,
- ✓ տեղաշարժման դժվարություններ ունեցող քաղաքացիների համար նախատեսված ենթակառուցվածքները,
- ✓ մանկական խաղահրապարակը,
- ✓ ֆուտբոլի և բասկետբոլի ունիվերսալ խաղահրապարակը,
- ✓ մարզական և հանգստի գոտիները,

Հավաքագրված ելակետային տվյալներն ու իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ Հողամասը համապատասխանում է ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում առաջադրված նպատակների ապահովման համար, Հողամասի ձեռքբերման գործարքը ներդրումային ծրագրի պայմաններով՝ փոխշահավետ է, իսկ ներդրումային ծրագրի իրագործումը էական

ազդեցություն է ունենալու Աբովյան համայնքի զարգացման և քաղաքաշինական նոր միջավայրի ձևավորման համար:

2. Շուկայի ուսումնասիրություն և վաճառքի կանխատեսում

Ապրանքի/ծառայության շուկայի նկարագրություն

Վերջին տարիների օրենսդրական հենքով որդեգրված սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված քաղաքականության շնորհիվ քաղաքացիները հնարավորություն ստացան առաջնային շուկայից /կառուցապատողից/ բնակելի նշանակության անշարժ գույք ձեռքբերելու դեպքում հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների վճարման նպատակով հետ ստանալ վճարված եկամտային հարկը, ինչը ձևավորեց նոր բնակելի ֆոնդի նկատմամբ էական պահանջարկ:

